

— Այ տղայ, ես գթեզ տեսել եմ, քու ձայնդ նաեւ ինձ անծանօթ չէ,—
զրուցեց Գուրգէն:

— Ինչպէս մարդկանց կերպարանքը՝ նոյնպէս իրենց ձայնը շատ
կարելի է, որ իրար նմանին,— ըսաւ Խոսրով:

— Ճշմարիտ է,— պատասխանեց Գուրգէն եւ լռութիւն դարձեալ
տիրեց:

Նաւակը իր ընթացքը գրեթէ առանց ընդհատման կը շարունակէր, եւ
կ'էս-գիշեր չեղած մեր բարեկամները ցամաք ելան:

Կ'իստուէր գիւղին փոքրիկ սենեակը լուսաւորուեցաւ. պատանին՝
Խոսրովու քեռորդին՝ մկրատ մը ձեռքը Գուրգէնի մագերը խուզեց,
մօրուքը փոքրեցուց թեթեւ ձեռք եւ դռան քովին Խուրենի ձեռքէն
առնելով մաքուր ծրար մը.

— Ահա իշխան,— ըսաւ,— ամէն բան պատրաստ է, սա քովի վտակին
ջուրը քաղցր է, օճառ սրբիչ եւ ամէն զգեստ կը գտնես այս ծրարին
մէջ: Քեռիս քեզ կօզնէ:

— Աս քու քեռորդիդ անգին տղայ է, Խոսրով: Ապրի՛ս որդեակ,
աստուած քեզ երջանիկ ընէ:— Եւ Գուրգէն ելաւ, բայց յանկարծ
դառնալով Խոսրովու.— Սակայն այս տղան. որ զիս առաջին անգամ
կը տեսնէ՝ չէր կրնար երեւակայել թէ իմ հասակիս ամէն զգեստ չի
յարմարիր:

Հոգ մ'ըներ, Գուրգէն, նա քու վրադ լաւ տեղեկութիւն առած է, այդ էլ
մտածած պէտք է լինի:

Երբ լուացուեցաւ Գուրգէն՝ զգեստաւորուեցաւ եւ դարձան սենեակը,
շնորհակալ եղաւ պատանուոյն եւ Խոսրովու ըսաւ.

— Հիմա զրուցէ թէ ինչպէս եղաւ, որ մէկ-երկու տարի երբ
յաջողութիւն ունեցայ եւ քեզ սուրհանդակ ուղարկեցի